ՈՂՋԻ ԳԵՏԻ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆԸ

Ա. Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Ողջին պատմական Սյունիքի առավել նշանավոր գետերից է։ Այն սկիզբ է առնում Կապուտջուղ լեռան արևելյան լանջից և հոսելով անդնդախոր ձորերով ու կիրճերով, ընթանում է դեպի արևելք, ճանապարհին փոր մեջ ընդունելով՝ ձախ կողմից Գեղի, Աճանան, աջ կողմից՝ Վաչագան, Գեղանուշ, Ճակատեն գետերը և մի շարք մեծ ու փոքր վտակներ, որից հետո Ղափան քաղաքից 4 կմ արևելք կոր աղեղ գծելով թեքվում է դեպի հարավ և հոսելով Զանգելանի դաշտով, թափվում Արաքսի մեջ։ Մատենագրական տեղեկություններ գետի անվան վերաբերյալ չեն պահպանվել, իսկ գետի Ողջի անունը համեմատաբար նոր շրջանից է գալիս։ Այն առաջացել է Ողջի կամ Ողջանց գյուղի անունից[1]։

Գետի անվանը անդրադարձողները այն հիշատակում են տարբեր անուններով։ Այսպես, Բաֆֆու «Դավիթ բեկ» վեպում կոչվում է Հալիձորի գետ[2], Կ. Շահնազարյանի «Սիւնիք» ուսումնասիրության մեջ՝ Բաղաբերդ. «Ի Բազաբերդէ իջանէ գետն Բաղաբերդի որ քերեալ զԿապանաւ և Հալիձորով վազէ ի Հագարի»[3]։

Լ. Սարգսյանը այն հիշատակում է, որպես «... Կապանի կամ Զավնդուր գետ»[4]։ Ղ. Ալիշանը Կապանի գետ է անվանում Ողջիի վերին հոսանքը, իսկ ստորինը՝ Զավնդուր[5]։ Սակայն նա ցանկանալով ճշտել, թե Ստ. Օրբելյանի հիշատակած Աղավնի գետը[6] Սյունյաց աշխարհի որ գետն է, արել է միմյանց հակասող ենթադրություններ։ Մի դեպքում նա գրում է. «Բաղում հաւանութեամբ արևելյան Բաղաց մասն է և ստորին գետահովիտ Զաւընդուրի, որում ի դէպ գան բանք պատմչին Սիւնեաց և հիշեալն ի նոսին Աղաւնի գետ...»[7] կամ՝ «Ըստ այսմ, եթէ ոչ խաբիմ, տեղի Նախկորզանի ի դէպ գայ արևմտյան Մինձեւանի, համարելով միշտ Աղաւնոյ գետ զՁավընդուր»[8]։ Մեկ այլ առիթով գրում է. «Յերից թեւոց զուգի գետս այս, Աղաւնոյ կամ Հագարու (կամ Ագարակու), որոց արեւելեանն և գլխաւոր ի սահմանակցութեան Արցախոյ՝ է ընիկն Ագարու գետ, Հաքարա-չայ կոչեցեալ յայլազգեաց...»[9]։ «Սիսականին» կցված քարտեզում ևս Աղավնի է կոչվում Հագարին[10]։

---

1 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 293։

2 Բաֆֆի, Դավիթ բեկ, Երևան, 1962, էջ 427։

3 Կ. Շահնազարյան, Սիւնիք («Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական», հ. Ա, Փարիզ, 1859, էջ 12)։ Ըստ Կ. Շահնազարյանի Ողջին թափվում է Հագարի գետը։

4 Լ. Սարգսյան, Մի քանի օր Արցախում և Սյունիքում, Թիֆլիզ, 1905, էջ 75։

5 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 290, 293։

6 Ստեփաննոս Օրբելյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 122, 128, հ. Բ, էջ 54, 234, 235։

7 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 283։

8 Նույն տեղում, էջ 285։

9 Նույն տեղում, էջ 265։

10 Նույն տեղում, տես քարտեզը։

Ինչպես տեսնում ենք, Ղ. Ալիշանը մեկ հակված է Աղավնի գետ համարել Ողջին, մեկ՝ Հագարին։ Վերջինս հայտնի է, որ «... սկիզբ է առնում Գելլրխ սարերից, հոսում է դեպի հարավ-արևելք և միանալով Բարկուշատ գետին, թափվում է Արաքսի մեջ»[11], որը և համապատասխանում է Աղավնի գետին[12]։ Ուսումնասիրողների կողմից հիշատակվող Ողջի գետի վերոհիշյալ անունները ուշ շրջանի են և ոչինչ չեն ասում նրա հին հայկական անվան մասին։ Միակ աղբյուրը, որը կարող է այդ հարցը լուսաբանել (այն էլ ոչ լրիվ), մեր կարծիքով, «Աշխարհացույց»-ն է։ Նրա հեղինակը թվարկելով Սյունիքի տասներկու գավառները, գրում է. «... հոմանուն գետովք մինչև ցնակորզեան քաղաք և անցսն իւր և Աղուան գետ»[13]։ Այս վկայության համաձայն Սյունիքի գետերը կրել են իրենց գավառների անունները։

Եթե նկատի ունենանք, որ Ողջին VII դ. հոսում էր Զորք, Բաղք, Կովսական գավառների միջով[14], ապա պետք է ենթադրել, որ դրանց միջով հոսող գետի համապատասխան հատվածները կրել են այդ գավառների անունները։ Այսինքն՝ Ողջի գետի վերին հոսանքը, որն անցել է Զորք գավառի միջով, կոչվել է Զորո գետ, միջինը՝ Բաղաց, իսկ ստորինը՝ Կովսական։ Պետք է ենթադրել, որ «Աշխարհացույց»-ի հեղինակը նկատի է ունեցել Սյունյաց աշխարհի խոշոր գետերը, հետևաբար, բացառվում է, որ Ողջի գետի այս կամ այն վտակը կամ այդ գավառների մեջ մտնող մեկ այլ գետ կարող էր կոչվել նշված գավառների անուններով։

Այն, որ Ողջի գետի վերոհիշյալ հատվածը կրել է Բաղաց գետ անունը, կարելի է հիմնավորել նաև նրանով, որ հենց այդ մասերում գոյություն ունեն տեղանուններ, որոնք կրում են միևնույն անվան տարբերակները և, հավանաբար, ունեն միևնույն էթնիկական ծագումը։ Դրանք են՝ Բաղաբերդ ամրոցը, Բաղակու քարը, վանքն ու բերդը, Բաղաբուրջ և Բաղաջրդ գյուղերը[15]։ Գոյություն է ունեցել նաև Բաղաբերդ անունով գյուղ, որը մտնում էր Զորք գավառի մեջ[16]։ Այս տեղանունների աշխարհագրական դիրքը վկայում է, որ Սյունիքում պատմական Բաղ ցեղի գրաված շրջանը, որից առաջացել են այս անվանումները, հիմնականում եղել է Ողջի գետի հովիտը[17]։

---

11 Թ. Խ. Հակոբյան, Սյունիքի թագավորությունը, Երևան, 1966, էջ 15։

12 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 34, Թ. Խ. Հակոբյան, նշվ., աշխ., էջ 14։

13 Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109։

14 Նույն տեղում, տես քարտեզը։

15 Թ. Խ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 112—118։

16 Ստեփանոս Օրբելյան, նշվ. աշխ., էջ 272։

17 Ըստ Գ. Ա. Ղափանցյանի՝ խեթական սեպագիր արձանագրություններից հայտնի pala (պալա) կամ bala (բալա) ժողովուրդը, որը ապրում էր խեթերից արևելք ընկած շրջաններում VIII—VII դդ. հետո, կիմերների և այլ ցեղերի ճնշման տակ թողնելով իրենց երկիրը, գաղթել են արևելք։ Ցնցային այս տեղաշարժերի հետևանքով նրանց մի մասը հաստատվել է այժմյան Զանգեզուրում, որոնցից և առաջացել են Բաղք գավառ, Բաղաց աշխարհ, Բաղաց տուն, Բաղաց երկիր, Բաղաբերդ, Բաղակու ամրոց անվանումները (Гр. Капанцян, Историко-лингвистическое значение топономики древней Армении, Ереван, 1940. էջ 66—68)։ Եթե նույնիսկ ընդունելի չլինի այս ենթադրությունը, կարելի է ասել, որ «բաղ» հիմքով կազմված անունները ցույց են տալիս, որ այնտեղ տարածված է եղել համանուն ցեղը։ Իսկ որ այդ անունները ունեն էթնիկական ծագում, չեն ժխտում նաև մյուս ուսումնասիրողները (И. Шопен, Исторический памятник состояния Армянской области а эпоху ее присоединения к

Այսպիսով, շատ հավանական է, որ Ողջի գետի հին հայկական անունը եղած լինի Բաղաց գետ[18] *և միայն հետագայում, երբ որպես վարչական միավորներ առաջացան գավառները, հավանաբար, այդ անունը պահպանվեց գետի այն հատվածում, որը VII դ. մտնում էր Բաղք գավառի մեջ։*

ДРЕВНЕАРМЯНСКОЕ НАЗВАНИЕ РЕКИ ВОХЧИ

А. А. КАРАГЕЗЯН

Резюме

Название реки Вохчи новое. Единственный источник, который позволяет нам уточнить древнее название реки, это «Армянская география VII века». Перечисляя названия 12 уездов Сюника, автор вышеуказанной работы отмечает, что реки в Сюнике назывались так же, как уезды, через которые они протекали. Так как верхнее течение реки протекало через уезд Дзорк, среднее течение — уезд Бахк, а нижнее — Ковсакан, то отсюда следует, что верхнее течение реки должно было называться Дзоро гет, среднее — Бахац гет, а нижнее — Ковсакан. Если учесть то обстоятельство, что в древности в бассейне реки Вохчи имелись населенные пункты, в названии которых присутствовал корень «бах» (*բաղ*), и они имеют этническое происхождение, например, Бахаберд (село и крепость), Бахаку кар (храм и крепость), Бахабурдж и Бахаджих (села) и т. д., то становится ясным, что река Вохчи в древности называлась Бахац гет.

Российской империи, СПб., 1852, *էջ 67*, Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, *էջ 423*, *Թ. Խ. Հակոբյան, Նշվ. աշխ., էջ 166)։*

18 *Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Ողջի գետի աջակողմյան վտակներից մեկը կոչվում է Բաղաց ջուր։ Այն սկսվում է Բաղաց սարի արևմտյան լանջից և հոսելով Ղափանի շրջանի Մուսալամ գյուղի մոտով, թափվում է Ողջին։ Այս վտակը հազիվ թե կարելի է գետ համարել, քանի որ այն սոսկ յեռնային մի առվակ է։*